


և արեգեբրակնութեամբ զորս գիտ-  
ցաւ իւր կաղամարին մէջ ամփոփել  
չորս բնորոշ յատկութեամբ՝ այսինքն  
է անգղիական հաստատամտութեամբ,  
գերմանական համբերութեամբ, գաղ-  
ղիական պատրաստականութեամբ և  
խալալական չափով։ Աւելցնենք մեր  
կողմանէ, որ երբ՝ 1848ին, ի վենե-  
տիկ գումարեցաւ իտալացւոց ազ-  
գային գիտնական հռչակաւոր ժողովն,  
որոյ՝ թէ ոչ Նախագահ՝ այլ Նախա-  
գահի ատենադպիր բերան և առաջ-  
նորդ էր ինքն կեսար կանաու, ըն-

տաներար ծանօթացաւ մեր Մխիթա-  
րեան Միաբանից հետ, յորոց՝ այն  
ժողովոյն ընկերագիր եղողք և ապ-  
րողք՝ իրենց նորահաս եղբարց հետ,  
փափագին՝ որ այս գոյնն ծանօթու-  
թիւնը, հանդերձ իր կենդանագրան,  
իբրեւ անմոռաց հաւաստիք յարգա-  
նաց իր արժանեացն, և նշոյլ հին բա-  
րեկամութեան, ընդունի բազմարդիւն  
և պանծալի Նեստորն ներկայ իտա-  
լական դպրութեանց և համաշխարհի  
պատմագրաց։ Վստահեմք որ մեր ազ-  
գային բանասէրք ալ ձայնակցին մեզ։

### ՏԱՐՈՐԻՆ ԱՎ ՀԱԿԱԿՐՈՒԹԻՒՆՔ



Մարդկութեան մէջ կայ առանձին  
համակրութիւն կամ հակակրութիւն  
մի, թէ ըլլայ նկատմամբ անձանց և թէ  
անշունչ առարկային։ Մեր հոգւոյն՝  
կամ լաւ եւս ըսել՝ մեր կազմութեան  
այս առանձին բնութիւնն նկատմամբ  
արտաքին տպաւորութեանց կը կոչուի  
քնիկ խառնուած։ Երբեք հոս այլեւայլ  
մարդկանց մի քանի հետաքրքրաշարժ  
համակրութիւն կամ հակակրութիւն  
քը։

Մեղիկեանց Մարիամի համար  
կը պատմուի, թէ վարդը հոտուըտա-  
լուն պէս իսկոյն վրան մարելիք կու  
գար, և ընդ հակառակն կարգէ գուրս  
կ'ախորժէր նարգէսը և յակինթը։  
Հռչակաւորն Երազմոս՝ որքան այլ  
Ռոտտէրդամի մէջ ծնած էր, սակայն  
այն աստիճան հակակրութիւն մ'ունէր  
ամեն տեսակ ձկանց, որ անոնց հոտն  
միայն բաւական էր իրեն վրայ ջերմ  
բերելու։ Ամբոստիոս Պարէոյ կը պատ-  
մէ իրեն յանձնուած հիւանդի մը հա-  
մար որ չէր կրնար տեսնել օձաձուկ ա-  
ռանց սարսուռ զգալու։ Թովսէփ Սկա-  
լիգերոյ և Պետրոս Աբանցի ո՛ր և է կեր-  
պով չէին կրնար իրենք զիրենք վար-  
ժեցնել կաթ ուտելու։ Կին մը խորո-

ված խեղափառ տեսնելով կը մարէր-  
ուրիշ մ'այլ ծածան (carpione) տեսնե-  
լով վրան ցնցիւն մի կը զգար։ Կար-  
գանոյ հակիթ մը տեսնելով՝ վրան այլ-  
այլութիւն կու գար։ Պոլոնիոյ Լա-  
դիսլաուս թագաւորն խնձոր մի տես-  
նելով շատ գէշ կը զգար։ Իսկ եթէ  
սոյն պտուղս Գաղղիոյ փրանկիսկոս թա-  
գաւորի Քեննէ քարտուղարին ընծայ  
տրուէր՝ իսկոյն քթէն արիւն կու  
գար։ Անգղիոյ թագաւորն Հենրիկոս  
Գ իւր սենեկին մէջ չէր կրնար կա-  
տու տեսնել․ ուրիշ գուքս մ'այլ ուր  
որ այս կենդանին տեսնէր՝ շտապաւ  
կը փախչէր նոյն տեղէն։ Աւստրիոյ  
փերդինանդոս կայսեր արքունեաց հը-  
րամանատարն կատուի մլաւելը միայն  
յսելով իսկոյն քթէն արիւն կու գար,  
թէպէտեւ բաւական հեռու այլ գտուէր  
այս անվնաս կենդանին։ Պ. Դէ լ'Անկը  
կը պատմէ մարդու մը վրայօք, թէ  
միայն անգամ մը ողնի տեսնելով  
այնքան զարհուրեցաւ, որ այնուհե-  
տեւ շատ տարիներ կը տանջուէր եւ  
բեւակայելով՝ թէ այս կենդանին է  
որ իւր փորտաթիւք կամաց կամաց կը  
կրծէ։ Նոյն հեղինակն կը պատմէ նաեւ  
զինուորական արդեամբք անուանի

սպայի մը համար, թէ չէր համար-  
ձակեր մկան մի վերայ յարձակիլ ա-  
ռանց ձեռքը պատրաստ սուր մ'ու-  
նենալու, կան մարդիկ որ չեն կրնար  
սարգ տեսնել, մինչդեռ մի քանի տե-  
ղեր այլ կ'ուտեն զայն, ինչպէս նաեւ  
գորտը և խխունջը, Հաննովբերցի ա-  
նուանի որսորդն վանգեյմ' հնդկական  
խորոված խոչքոր մի տեսնելով այնքան  
վրան սարսուռ կու գար՝ որ փախչելու  
ժամանակ սարսափէն մինչեւ անգամ  
գետին կ'ընկնէր, Քրիստիպոս փիլի-  
սոփայն այնպէս կը զգուէր ողջունա-  
տուութեան համար գործածուած քա-  
ղաքավարական կերպերէն, որ եթէ  
տեսնէր մէկու մը այս գիտմամբ առ  
ինքն մօտենալը, իսկոյն վերնոտական  
ոտնահարութենէ կը բռնուէր, վա-

ղերիոս Մաքսիմոս կը պատմէ, թէ  
սոյն Քրիստիպոս փիլիսոփայն անգամ  
մը տեսնելով որ էշ մը արծաթեայ  
պնակի միջէն թուզ կ'ուտէր՝ խնտալէն  
մեռաւ, Թովհ. Ռոյ Ալկանդարացի ազ-  
նուականն բռնորդ բառի արտասանուին  
միայն լսելով իսկոյն կը մարէր, թէ-  
պէտեւ իւր վերնազգեստն այլ բրդե-  
ղէն էր, Լորդ Բակոն իւրաքանչիւր  
լուսնի խաւարման այլալուծիւն մի  
կը զգար վրան, Դիւքոյ Բրահէ ա-  
յուէս մի տեսնելով կը սկսէր սարսուռի-  
Արիստոյ այլ բաղանեաց մերձենալու  
ստեն, կան ոմանք այլ որ առանձին  
պանիր տեսնելէն կը զգուին, թէպէտ  
շատ անգամ առանց գիտութեան, և  
ոմանք նաեւ գիտութեամբ կերակրի-  
ղինաց հետ խառն ախորժով կ'ուտեն.

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                                        |    |
|----------------------------------------------------------------------------------------|----|
| Տեսութիւն հայ օրագրութեան վերայ .                                                      | 1  |
| Քանի մի պարսկերէն բառեր որ գործ-<br>ածուած են ի պատմութեան Ե-<br>ղիէի . . . . .        | 5  |
| Հին հաւատք հայոց Գլ. Թ. — Դիւք. —<br>Պաշտօն շատուածոց . . . . .                        | 8  |
| Հայկական բուսաբանութիւն . . . . .                                                      | 13 |
| Ուղեւորութիւն Շանդրի յարեկիս . . . . .                                                 | 20 |
| ՔԱՆԴԱԿԱՌԻՐՈՒԹԻՒՆ — Ա. Առ<br>արեւելայս. — Բ. Առ Եդես. —<br>Բ. Գ. և Դ յեղանակք . . . . . | 24 |
| Տաղ ի Ս. Անտոն (Հին քնար) . . . . .                                                    | 30 |
| Իշխանաց կղզիք . . . . .                                                                | 31 |
| Աղդ . . . . .                                                                          | 35 |
| Արդի կենաց մեքենակութիւնն և մեծա-<br>մեծ գործատուէք . . . . .                          | 36 |
| Թիթեոնիկ և Ճանճ (Առակ) . . . . .                                                       | 39 |
| ՎԵՍՏԱՆԻ ԿՈՅՍ. — Պատմական վէպ<br>եկեղեցւոյ առաջին դարու . . . . .                       | 40 |
| Կեսար Կանտու իտալացոց մեծ պատ-<br>մադրի իննսնամեակն . . . . .                          | 44 |
| Տարօրինակ հակակրօթիւնք . . . . .                                                       | 47 |

## SOMMAIRE

|                                                                                                                    |    |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Un coup d'oeil sur les journaux armé-<br>niens . . . . .                                                           | 1  |
| Mots persiques employés par Élisée<br>dans son histoire . . . . .                                                  | 5  |
| L'ancienne foi des Arméniens, ou la<br>religion Arménienne . . . . .                                               | 8  |
| Les mots botaniques arméniens . . . . .                                                                            | 13 |
| À travers l'Arménie russe . . . . .                                                                                | 20 |
| LA SCULPTURE. — I. La sculpture chez<br>les Orientaux, — II. chez les Grecs,<br>I. II. III. IV. périodes . . . . . | 24 |
| Hymne pour Saint Antoine (Lyre an-<br>cienne arm.) . . . . .                                                       | 30 |
| Les Iles des Princes . . . . .                                                                                     | 31 |
| Avis . . . . .                                                                                                     | 35 |
| Le mécanisme de la vie moderne, et<br>les grands magasins . . . . .                                                | 36 |
| Le Papillon et la Mouche (Fable) . . . . .                                                                         | 39 |
| LA VESTALE. — Récit historique du<br>premier siècle de l'Eglise . . . . .                                          | 40 |
| Généthliaque de Cesare Cantà . . . . .                                                                             | 44 |
| L'antipathie extraordinaire . . . . .                                                                              | 47 |